

ԳՐԱՆՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть, Редакция „Мелк“.

Կամ Tiflis, Rédaction „Mschak“.

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրությունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լուրով.

Յայտարարութիւնները համար վճարում են

խրաբանչիւր բառին 2 կոպեկ.

Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԻՄՆԱԿԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆՎԱԿՈՒԹԻՒՆ

Անդրեաս Արծրունու գերեզմանի առաջ.—
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Գիտութեան մարդը.
Պրոֆէսոր Արծրունու գրական գործ-
նունը լինելով: Նամակ Խմբագրութեան. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ընդունված.
Կաթողիկոսութեան Վանութ. Նամակ Պարսկաս-
տանից.—ՀՆՈՒԱԿԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ. Արծրունիների տոհմը:

ԱՆԻՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ ԳԵՐԵԶՄԱՆԻ ԱՌԱՋ

Արծրունի եղբայրները՝ Գրիգոր և Անդ-
րէաս իրանց անձնաւորութեամբ հազուա-
գիւս երևոյթ են կազմում հայերի մէջ:
Երկուսն էլ մեծ եռանդի տէր, երկուսն էլ
իրգելական ձգտումներով, երկուսն էլ մեծ
աշխատասիրութեան և տոկունութեան
ընդունակութեամբ և երկուսն էլ յամառ-
կան նպատակների մէջ: Մէկը ընտրեց
իր համար իբրեւ գործունէութեան աս-
պարէզ հրապարակախօսութիւնը,
իսկ միւսը՝ գիտութիւնը: Նւ նրանցից
իրաւաբանչիւրը մնաց հաւատարիմ իր կոչ-
ման մինչև կեանքի վերջը, որ մի առան-
ձին գուգադիպութեամբ տեղի ունեցաւ
այն հասակում, երբ նրանք դեռ շատ և
շատ ոյժ էին գգում իրանց մէջ գործե-
լու իրանց սիրած ասպարէզներում:

Հայերի մէջ շատ քիչ են այնպիսի ու-
նեւոր և ապահովված ընտանիքներ, որտեղ
հարստութիւնը չը շլացներ մարդկանց իր
որտաքինով և որտեղ իրգելական ձգտում-
ները գերակշռէին կեանքի սովորական
վայելչութիւնները: Հարուստ ընտանիքնե-
րը տալիս էին թուրքամիտ, կամքից զուրկ
խղճայի էակներ, որոնց միակ նպատակն
էր լինում ձոխ ապրել և շուայ կենցա-
ղավարութեան մէջ մոռացնել տալ աննպա-
տակ գոյութեան դատարկութիւնը: Հա-
սարկութիւնը չէր առաջադիմում՝ փո-
խելով հին սերունդը նոր սերունդի, և եր-

բեմն նոյն իսկ յետադիմում էր, տալով
աշխատասէր ծնողների փոխարէն ծոյլ և
փշացած զաւակներ: Բայց ահա մեր ա-
ռաջ ներկայանում է մի ընտանիք, որ
մեր երկրում ձեռք էր բերել աչքի ընկ-
նող նշանակութիւն և ազդեցութիւն թէ՛
իր հարստութեամբ և թէ՛ բարձր հասա-
րակական գիւրգու: Կեանքի վայելչութիւն-
ները, սակայն, չը շլացնէին զաւակների
գլուխները, իսկ կանոնաւոր կրթութիւնը
տուեց երիտասարդ ոյժերին գիտակցական
վերաբերմունք դէպի կեանքի նպատակը և
ապագայ գործունէութիւն ընտրելու հարցը:

Մենք շատ անգամ ենք առիթ ունեցել
կանգ առնելու Գրիգոր Արծրունու գոր-
ծունէութեան վրա և մեր հասարակա-
կան զարգացման գործը դեռ շատ առիթ-
ներ կը տայ լուսելու նրա մասին: Մաս-
նաւոր ենք, ուրեմն, մեր խօսքը Անդրե-
աս Արծրունու մասին նրա խօսքը գերեզ-
մանի առաջ: Անդրէաս Արծրունին, կարելի
է ասել, առաջինն է հայ գիտականներից,
որ ընդունվել է եւրօպական գիտական
ամենաբարձր շրջաններում իբրեւ իսկապէս
գիտութեան հաւատարիմ սպասաւոր, իբրեւ
գիտութեան ծիշ գիտնական, որով հե-
տագոյն մի մարդ: Մենք ունեցել ենք
և ունենք մի շարք անձնաւորութիւններ,
որոնք զբաղվել են գիտութեամբ և գիտ-
նական հարցերով, բայց նրանք մեծ մա-
սամբ բաւականացել են երաժշտական
պաշարի իւրացմամբ և իրանք չեն ձեռ-
նարկել սեփական հետազոտութիւնների
կամ կատարել են այդ սահմանափակ չա-
փով: Անդրէաս Արծրունին տուել է մի շարք
ինքնուրույն հետազոտութիւններ, որոնք
է յատկացրել են նրան այն պատկանելի-
տեղը, որ նա զբաւել է իր մասնագիտու-
թեան, այն է հանքաբանութեան մէջ:
Միւս կողմից նա չէ մնացել միայն իբրեւ
լոկ հետազոտող և կարելի տալին, տեսա-

կան մարդ, այլ նա գործնական ապէս
հետազոտել է բազմաթիւ հանքեր և աղ-
ղիլ հանքերի շահագործութեան վրա:
Իբրեւ պրոֆէսոր և գիտական ղեկավարող
նա թողել է բազմաթիւ աշակերտների
մի խումբ, որ սովորել է նրանից գիտնա-
կան կատարելագործված մեթօդով աշխա-
տելու եղանակները:

Բայց պրոֆէսոր Արծրունին ամենեւին
չէ սահմանափակել իրան միայն իր մաս-
նագիտութեամբ: Նա միշտ զգացել է ի-
րան իբրեւ հասարակութեան ան-
դամ, մասնակցել է հասարակական կեան-
քին, հետեւել է նրա զարգացման գործին
և երևան է եկել հրապարակախօսութեան
մէջ իր խօսքով և կարծիքներով: Անդրէաս
Արծրունին բացի գիտական ոյժից նաև
հասարակական ոյժ էր, ուստի և կրկնակի
զգալի է դառնում նրա կորուստը:

Ա. Գալանթապ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԳԻՏՈՒԹԱՆ ՄԱՐԿԸ

Մեռաւ և Անդրէաս Արծրունին...

Շատերը ցաւ են յայտնում, որ նրանով վեր-
ջացաւ Արծրունիների հին տոհմը. ուրիշները
ցաւ են յայտնում, որ գիտութիւնը կորցրեց մի
անխնայ և ազնիւ մշակ, բայց շատ շատերն
ափոստում են, որ Անդրէաս Արծրունին, լինելով
մի գուռ գիտական ոյժ, այն և նշանաւոր
ոյժ, իր գիտութիւնը, իր տաղանդը գործ դրեց
հայրենիքից դուրս, օտար հողի վրա, օտարի
օգտին:

Այդ բանի մէջ, ի հարկէ, մեղաւոր չէր Անդ-
րէաս Արծրունին. հայրենիքը, մայր երկիրը ան-
հրապարտ հանդիսացաւ իր հարազատ զաւակի
վերաբերմամբ, և այդ տաղանդաւոր զաւակը
ստիպվեց իր ոյժերը գործ դնել այնպիսի մի
երկրում, որ միշտ օրրան է հանդիսացել գի-
տութեան, գգվել և փայտացել է գիտութեան

համեստ, անխնայ և արժանաւոր մշակներին և
ամեն միջոց ու հնարաւորութիւն է տուել միջի
աշխատաւորներին լայն կերպով մշակել ու զար-
գացնել իրանց ձիրքերը և մտաւոր կարողու-
թիւնները: Դեռ հարց է՝ արդեօք Անդրէաս Արծ-
րունին ելել մնար և գործել Կոկիսում, կը
կարողանար մտնել գիտութեան ընդհանուր
զանձանակի մէջ այն լուսման, որ նա մշո-
ցրեց՝ մնալով և դործելով Կերմանիայում:
Չուտ գիտութեան համար մեր երկիրը դեռ
այնքան անապատաւ, անզարգացած և ան-
հրապարտ է, որ դժուար թէ Անդրէաս Արծ-
րունին, գիտութեան և արտաբանութեան ան-
հրապարտ է և անձնատուր մի անձն, կարո-
ղանար այստեղ նպաստաւոր հող գտնել:

Բայց մնալով Կերմանիայում՝ իսկական գի-
տութեան օջախում, Մալէշտի, Վիրթովի, Հուս-
թուլի հայրենիքում, Անդրէաս Արծրունին իբրեւ
այդ գիտութեան մի նշանաւոր գիտնոր, գոր-
ծել է ոչ միայն յօգուտ գերմանական ազգի,
այլ և յօգուտ ընդհանուր մարդկութեան, յօ-
գուտ իր սեպական երկրի և ազգի: Նւ անհ ինչ-
պէս: Գիտութիւնը համամարդկային է. նա չէ
պատկանում ոչ գերմանացուն, ոչ ռուսին, ոչ
հային, ոչ եւրօպացուն, ոչ ասիացուն. հետաւար
գիտութեան ասպարէզում գործողը, գիտութեան
իսկական գիտնորը և գուռ մշակը ծառայում է
ոչ թէ այս և այն երկրին կամ ազգին, այլ ընդ-
հանուր մարդկութեան, ծառայում է ընդհանուր
քաղաքակրթութեան գործին, համամարդկային
պրօգրէսի գործին:

Բայց Անդրէաս Արծրունին՝ իբրեւ գուռ գիտ-
նական ծառայելով մարդկութեան և ճիւղացնելով
իր մասնագիտութիւնը կազմող գիտութեան ճիւ-
ղերը նոր տեղեկութիւններով, մեծ ծառայու-
թիւն է մատուցել մի և նոյն ժամանակ և այն
ազգին, որին նա պատկանում էր ծագումով:
Հայերը ցոյց տալով ընդունակութիւն, ձիրք,
կուլտուրական ոգի զանազան ասպարէզներում—
գեղարուեստի, գիտութեան և քաղաքացիական
վարչութեան, գրականութեան, հրապարակախօ-

ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ

ԱՐԾՐՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՂՄԸ

(Պատմական ակնարկ)

Անդրէաս Արծրունու մահով՝ վերջացաւ Արծ-
րունիների նշանաւոր տոհմը: Ոչ Գրիգոր Արծ-
րունի և ոչ Անդրէաս Արծրունին ժառանգ չը
թողցին: Նրեմիա Արծրունու որդիներէնցից
կենդանի է այժմ միայն նրա աղջիկը, որ ամուս-
նացել է Քուլիայի իսկական փոխ-նահանգա-
պետ գերմանացի Փօն-Բրիւզէին: Նեոս Ի նկատի
ունենալով այդ տոհմի անապին նշանակութիւնը,
ապագայում ենք մի քանի պատմական տեղեկու-
թիւններ, քաղելով Ա. Ներցեանի աշխատու-
թիւնից:

1813 թ.ին ներկայացաւ Կովկասի կառավար-
չապետ գեներալ Բրիւզէին մի վանեցի պատ-
ւելի հայ և ցանկութիւն յայտնեց զաղթել դեր-
դաստանով՝ զայլ Թիֆլիս և դառնալ ռուսաց
հպատակ: Դա միմեջի Գեորգ աղա Նրան-Արծ-
րունին էր, որ իր խելքով, ազդեցութիւնով և
հարստութիւնով նշանաւոր էր ամբողջ Թիֆլիսի
Հայաստանում: Յայտնի չէ, թէ ինչը զրգեց
Գեորգ աղային կատարել մի այդպիսի մեծ բայ՝
—Օտմանցիների ընդունելուն էր արդեօք, անձնա-
կան որ և է անբաւականութիւն, թէ մի ուրիշ
պատճառ: Գեորգ Արծրունին իր Կարաստան
խրատուց՝ գրել մէջ իր մասին գրում է՝
«Եւ ինչ ներքին և արտաքին զարգացման,
որ հարեւան իմ ընդ իս անցնէ անցին,
որ ինչ օգուտ է իմ սերունդի համարին,
որ անպակաս վասնել զարգացնէ իմ հինգն»:

Բայց թէ ինչ էր այդ փորձանքը, կամ ինչի
մէջ էր կայանում կրած ներքինը—յայտնի չէ:
Բայց և այնպէս, այդ պատճառները շատ ծան-

րակիւս պիտի լինէին, քանի որ նա, իրան Արծ-
րունեաց թագաւորների պայազատ և ժառանգ
համարելով, այսօր բարի կամքով թողնում էր
Արծրունեաց աշխարհը, իր հայրենիքը, նախ-
նիքներ չիլիմները, ազգականներին, մեծամեծ
անշարժ կալուածները և, վերջապէս, իր մեռե-
րիմ հայ ժողովուրդը, որից իշխանական յարգ
և պատիւ էր վայելում,—ընդունում է հպատա-
կութիւն ուրիշ տերութեան:

Հեռաւոր Բրիւզէի տեղեկանալով Արծրունու
ծագման, հարստութեան և անձնական յատկու-
թիւնների մասին, առաջարկեց Գեորգ աղային
իր հովանաւորութիւնը և անհրաժեշտութեան
նւ անհ 1813 թ.ին Գեորգ աղա Նրան-Արծրու-
նին, իր գերազատանով հանդերձ, տեղափոխեց
Վանից Թիֆլիս: Բայց զայով մի անձնաւոր էր
կիր, որ ոչ իրան են ձանաչում, ոչ էլ ինքը
ուրիշներին, ուր անձնական յատկութիւններից
գերազանց էր դասվում տոհմական ծագումը, և
ուր, ուրեմն, լայն առաքել էր բացվում յինչի
անցնալ փառքի վրա, մանաւանդ որ այդ փա-
ռաւոր անցնալ էլ կար,—Գեորգ աղան պարտք
համարեց ապաւովել իր սերունդի համար իրանց
տոհմական ծագման արտօնութիւնները: Այս
նպատակով Գեորգ աղան շինել է իր տոհմա-
գրութիւնը, որ վաւերացրել են հայոց բարձրաս-
տիճան հոգեւորականներ և աշխարհականներ,
որպէս Վասպուրական աշխարհում, նոյնպէս և
Ելմիստում: Այդ տոհմագրութեան ռուսերէն
թարգմանութիւնը ներկայացված է գեներալ
Բրիւզէին 1814 թ.ականին: Նրա մէջ անված է
հետեւեալը.

«Տոհմագրութիւն Արծրունու ցեղի.
1 հոկտեմբերի 1814 թ.»

«Որովհետեւ ամենքին ցանկալի է տեղեկու-
թիւն ունենալ իր ցեղի սկզբնական ծագման
մասին, և արդէն շատերը ջանք գործ դնելով
աշխուղ են հասնել այդ նպատակին, որպէս և
մեր ազգի մէջ, հայոց թագաւորութեան ժամա-
նակ, այդ հոգաւորութիւնը միշտ եղել է ու-

միմիայն թագաւորութեան ընկնելուց յետոյ
այդպիսի ձգտումն արժանաւոր է,—վասնորոյ
են, ներքոյ ստորագրեալս, խոնարհաբար խնդ-
րում են՝ բարեկրօն հոգեւորականութիւնից և
մեր հայրենի երկրի՝ Վասպուրական աշխարհի
Վան, այսինքն Շամիրամակերտ, քաղաքի աշ-
հարկան հայերի ազնիւ զաւակ, և առհասարակ
վերաբերմամբ, և այդ տաղանդաւոր զաւակը
ստիպվեց իր ոյժերը գործ դնել այնպիսի մի
երկրում, որ միշտ օրրան է հանդիսացել գի-
տութեան, գգվել և փայտացել է գիտութեան

«Բայց թողնեմք քալ Արծրունեաց նախկին
հոգաւոր իշխանական աստիճանը, որ Վաս-
պուրական աշխարհում է, և անցնենք նոյն
երկրում պատահած նորագոյն կարգադրութիւն-
ներին: 1534 թ.ին, երբ թիֆլիսից սովորեալ տի-

րապետեց Վասպուրականում Վան քաղաքը, ուր
բնակվում էին Արծրունեաց տոհմի իշխանները, որի
մասին յիշվում է այնտեղի տարեգրութիւնների
մէջ, այն ժամանակ տեղիս այդպիսի բնակիչ-
ներին և Հայկազեան իշխաններից ոմանք (Արծ-
րունեաց) շնորհեց իրաւունք ստանալ քաղաքիս
կառմունքներին մի մասը և աղաւ լինել հարկե-
րից: Իշխանների (Արծրունեաց) այս արտօնու-
թիւնների իրաւունքը մինչև հիմա էլ մնում է
Վան հաստատ: Նւ այսպէս անա իմ նախնի
Նրան Արծրունին կոչվում էր «Տոհմագրութիւն»
չիլ (բերդի եկամտներին ընկեր). այս կոչումը
պատկանում էր (Վանայ) եկամտներին մի մա-
սը ստացողին, և մենք, որպէս նրա սերունդը,
մինչև հիմա էլ վայելում էինք նոյն իրաւունքը:
Իսկ մեր տոհմագրութիւնը սկսվում է Նրան
Արծրունուց, որից ծնեցին 3 ուսար և 3 դուստր,
այն է՝

- 1530 թ.ին Նրանից ծնեցին՝ Միրջան, Բօջան,
Գալիթ և երկու դուստրը՝ Վատարին և
Սանդուխտ:
- 1558 թ.ին Միրջանից—Ներմիա և Հայկ:
- 1580 թ.ին Ներմիայից—Ջալալիա և Մարիամ:
- 1603 թ.ին Ջալալիայից ծնեցին Թովմա և
Անարտ, յետոյ այն մասնաճիւղայ մաս-
տարածվել ոչ ոք մնաց կենդանի մեր
նախնիներից, բացի Միրջանի թոռը՝
Հայկի որդին, որ նամանակէս կոչվում
էր Հայկ—Այս Հայկից 1559 թ.ին ծը-
նեց Բոմա, իսկ 1605 թ.ին Բոմայից
ծնեց Մարիամ:
- 1628 թ.ին Մարիամից ծնեց Գեորգը:
- 1649 թ.ին Գեորգից—Միրջանը:
- 1672 թ.ին Միրջանից—Ներմիա, Նովսաթիթ
և Ջալալիա:
- 1693 թ.ին Ներմիայից—Միրջանը:
- 1727 թ.ին Միրջանից՝ Ներմիա, Վարդ, Խա-
թուն և Յովհան 1728 թ.ականին:
- 1771 թ.ին Ներմիայից՝ Գեորգ—են, իսկ ին-
ձանից յետոյ իմ ընդ Շողակաթը և եղ-



սովորական մէջ, և այդ աստիճաններու բաւական մեծ թիւով նշանաւոր ներկայացուցիչներ են ունեցել: Բայց հայերը չափ քիչ ներկայացուցիչներ են ունեցել զուտ մասնագիտական, մանրակրկիտ հետազոտութեան և ուսումնասիրութեան վերաբերեալ գիտութեան ասպարէզում, որտեղ հարկաւոր է մասնագիտական մեծ հմտութիւն, երկար տարիներ շարունակ անխնայ հետազոտութիւն, բարեխիղճ մանրակրկիտ ուսումնասիրութիւն, մի խօսքով՝ մաքուր, զուտ, անպայման գիտութիւն, բուն գիտական ոգի և տաղանդ: Այդպիսի զուտ, բարձր, վերացական գիտական ոգի և տաղանդ յատուկ է միայն կուլտուրայի մէջ գտնուող, բովանդակաւ ազգային, և ահա, Անդրեաս Արծրունին ասպարէզեց, որ հայը ևս կարող է զուտ, անպայման գիտական հանդիսանալ, որ նա ևս կարող է ընդհանուր, վերացական գիտութեան մէջ իր լուսնի գոյնը և ուրիշ կուլտուրական ազգերի հետ միասին պիտի յարեմք գիտութեան դրօշակին:

Այդ տեսակէտից մանաւանդ մենք ահազին նշանակութիւն ենք տալիս Անդրեաս Արծրունու գործունէութեան, և ոչ թէ ցաւ, այլ անկեղծ ուրախութիւն ենք զգում, որ նա առիթ ունեցաւ գործելու օտար հողի վրա և ցոյց տալու օտարին, որ հայը ընդունակ է նաև զուտ գիտական, վերացական, փիլիսոփայական մտքերի...

Եւ օրհնեմք լինի զուտ գիտականի, եւրօպացի-հայ գիտականի՝ Անդրեաս Արծրունու յիշատակը: Եթէ Արծրունի տոհմը վերջացաւ, բայց նրա վերջին շառաւիղները այնպիսի ահագին ծառայութիւններ մատուցին հայ ազգին, որ յաւիտեան պէտք է մնան ազգի յիշողութեան մէջ:

Հ. Առաքելեան

ՊՐՈՖԷՍՈՐ ԱՆԻԿԷԱՍ ԱՐԴՐՈՒՆԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ՊԵՐԻՍԿՈՒՆԸ

Անդրեաս Արծրունին վերջացնելով իր ուսումը, նուիրեց իրան մատուր գործունէութեան: Մնալով արտասահմանում, նա ընտրեց բարձրագոյն դպրոցներում դասախօսելու ասպարէզը: Մօտ քսաներեք տարի Գերմանիայի Գանապոլս քաղաքում դպրոցներում դասախօսութիւններ կարողացաւ պատկերասրահել իր մասնագիտութեան մէջ այնչափ հմտացնել, այնքան անուշ հանեց, որ վստակեց գիտական աշխատի յարգանքը, որի մի նշանն էլ այն էր, որ նա երբեք տարի առաջ Պետերբուրգի գիտութիւնների Ակադեմիայի թղթակց անդամ ընտրուեց: Իր գիտական գործունէութեան ընթացքում հանգուցեց պրոֆեսոր գրել և թարգմանել յօդուածներ, բնագիտական, աշխատակցել է գիտնական հրատարակութիւններին: Այդ գիտական գործունէութեան մասին մենք չենք խօսի, և

բայց— Հակովբ: 1793 թ.ին ինձանից—Գէորգից—ծնեց Մարիամը, իսկ 1804 թ.ին ինձանից—Գէորգից, ծնեց Ներսիսը: Սրա տակը ստորագրեց՝ Գէորգ, Ներսիսի որդի,

Նրան Արծրունի: *

Այս գրութեան վրա ստորագրել են ոչ միայն Վասպուրականի բարձրաստիճան հոգևորական և աշխարհական անձինք, այլ և Նիքիտ կաթողիկոսը և այն ժամանակվայ Սինոդ կամ Հոգևոր ժողով կազմող եպիսկոպոսները: Դրանք բոլորեցնանք վկայում են, որ գրութեան մէջ յիշված բոլոր պատմական իրողութիւնները և տոհմաբանութիւնը ճիշդ են: Ներկայացնելով այդ վկայականը Ռտիշչևիցին, Գէորգ աղան խնդրում է, որ Ռուսաց տէրութիւնը հաստատէ նրան ժառանգական ազնւութեան մէջ և չորսէ իշխանական տիտղոս: Կառավարչապետ Ռտիշչևիցի, որ արդէն ցոյց էր տալիս Արծրունու իր հովանաւորութիւնը, պատշաճաւոր միջնորդութեամբ գիմեց Պետերբուրգի բարձրագոյն իշխանութեան: Այնտեղ Վերոդիւին անուանված ատենում, ուր սովորաբար քննվում են ազնւական տոհմերի ծագման խնդիրները, այն եզրակացութեանը եկան, որ ռուսական օրէնքների համաձայն պահանջվում է, որպէս զի ազնւականութեան ապացուցանող վկայականները տրված լինեն միմիայն տէրութիւններից, իսկ հոգևորականների և աշխարհականների վկայութիւնները կարող են ի նկատի առնվել իբրև երկրորդական նշանակութիւն ունեցող գրութիւններ: Եւ որովհետև Արծրունին էլ ներկայացրել մի այդպիսի վկայական Օսմանեան տէրութիւնից, որի հպատակն էր նա, վստահորոյ լով հոգևորականների վկայութեամբ նա չէ կարող ընդունվել Ռուսաց ազնւական:

Գէորգ աղան չէ վճռովեց այդ պատասխանից: Երբօրով նշանակվիլը Ռտիշչևիցի փոխարէն մի

թողնում ենք այդ պարտականութիւնը աւելի ձեռնհաս անձանց:

Պրոֆեսոր Արծրունին այն տեսակ գիտականներէից էր, որոնց աշխարհը միմիայն իրանց առանձնատենական է: Լինելով գիտութեան մարդ, նա երբեք չէր կտրվում դրսի աշխարհից, մանաւանդ նշանաւոր է այն հանգամանքը, որ նա մինչև իր վերջին շունչը մնաց հայ հասարակութեան անդամ: Երկար տարիներ ընթացքում նա նուիրել է իր գրելը հայոց մամուլին, չօշակել է մեր կենսի զանազան երկույթները, աշխատել է ծանօթացնել մեզ եւրօպական կենսի հետ, գրելով այն բոլոր հետաքրքրական և ուսանելի փաստերի մասին, որոնց նա ականատես էր լինում: Եւրօպայում: Այդ գործունէութիւնը պակաս պատաճեք չէ հանգուցեալի համար: Եւ այժմ, երբ նա այլ ևս չը կայ, մեր պարտն է մի թիւին հաշիւ տալ հայ հասարակութեան, թէ ինչ է արել հանգուցեալը մեզ համար, երկար տարիներ աշխատակցելով «Մշակին»:

«Մշակի» սկզբնաւորութեան հետ մեր մամուլի ասպարէզում համարեա միաժամանակ են դուրս գալիս երկու եղբայրները՝ Գրիգոր և Անդրեաս Արծրունիները: 1872 թ.ին յունվարի 1-ին լոյս տեսաւ «Մշակի» առաջին համարը, իսկ երկրորդ համարում արդէն տպւած էր Անդրեաս Արծրունու թղթակցութիւնը Բերլինից: Ինչպէս երևում է, նա իր գլխաւոր նպատակն էր ընտրել հաղորդել այնպիսի տեղեկութիւններ, որոնք վերաբերում են հայկական կենսին: Այսպէս, այդ առաջին նամակում նա խօսում է Եւրեկէի մի աշխատութեան մասին, որ վերաբերում է թիւրքաց Հայաստանին: Յաջորդ նամակ ծանօթացնում է նշանաւոր գերմանացի աշխարհագիր Կիպերտի մի գեղեցիկ մասին, որ դարձեալ վերաբերում է թիւրքաց Հայաստանի տեղագրութեան: Այսպէս և տեսնում մի մասնաւոր: Նայելիս նուրբած մի աշխատութեան մասին: Գերմանական լրագրողներում հայերի մասին եղած տեղեկութիւններն ու դատողութիւնները անուշ չէ անում Արծրունին: Բայց մի և նոյն ժամանակ նա չէ մոռանում և եւրօպական կենսին և Ստրասբուրգից դրած նամակների մէջ նկարագրում է տեղական կենսը, նոր բացված համալսարանը, նրա պրոֆեսորներին: 1873 թ.ին նա ամբողջ բանասիրական է դրում Լէսսինգի մասին և չէ դադարում ամեն մի նշանաւոր, հետաքրքրական երևոյթի վերաբերմամբ տեղեկութիւններ հաղորդելուց:

1874-ին Անդրեաս Արծրունին հրատարակեց Բերլին հանքաբանութեան ասոսիտենտի պաշտօնով: Բայց կամենալով աշխատել իր հայրենիքում,

գալիս է Կովկաս և գաղտնի մի երկար ճանապարհորդութիւն է սկսում: «Մշակի» մէջ մի-մեկանց ետեւից տպւում են թարգմանութիւնները: Թարգմանութիւններ Գիւլիշանից, Լօռուց, Ջալալ-Օղլուց, Վալդիկավազից, Գաղտնի զանազան կողմերից, Դերբէնդից, Բագուից, Գուբայից, Վարդաշենից, Ջաբաթալից: Այդ նամակների մէջ, որոնք մեծ հետաքրքրութեամբ կարդացնում են և այժմ, Արծրունին հանդէս է գալիս ոչ միայն իբրև մասնագէտ, որ ուսումնասիրում է մեր երկրի բնական հարստութիւնները, այլ և իբրև տուրիստ, որ հաղորդում է իր տպաւորութիւնները, նկարագրում է ժողովրդի նիւտ ու կացը, ուշադրութիւն դարձնելով մանաւանդ տգիտութիւնից, նախապաշարմունքներից առաջացած տիպիկ երևոյթների վրա: Ժողովրդի իրական օգուտները շատ մօտ համարելով իր սրտին, երեսաստարդ դոկտոր ոչ միայն տեսնում և ուսումնասիրում էր, այլ և խորհուրդներ էր տալիս, հասկացնում էր, թէ ինչ պէտք է անել՝ տնտեսական բարեկաւրութեան հասնելու համար: Այսպէս՝ Գուբայում և Դերբենդում նա առանձին ուշադրութիւն դարձեց տորոնի խոշոր արդիւնաբերութեան վրա: Այն ժամանակ սկսվել էր տորոնի կրիզիսը. նոր ժամանակած արդարիւնը սպառնում էր բոլորովին ոչնչացնել տորոնը և հազարաւոր մարդիկ պիտի զրկվէին ապրուստի միջոցից: Արծրունին ներկայ էր տարիս, հասկացնում էր, թէ ինչ պէտք էր անել արդարիւնի ժողովրդին:

Վերադառնալով Քիֆլիս, Արծրունին «Մշակի» մէջ մի ամբողջ շարք տնտեսական յօդուածներ գրեց («Վաւերիքի պահանջ», «Եւրօպական գումարները Կովկասում», «Սիմֆերոպոլի նաւթի գործարարները», «Լուսաւորութիւնը դաղիք», «Օթոգիկներ», «Սօղայի գործարար Բագուի մէջ»)։ Բացի դրանից նա խոսեցաւ տալ մի շարք յօդուածներ «Կովկասի հանքերը», վերնագրով: Բայց տպւած են միայն «Ոսկի», «Արծաթ» և «Կօբալտ» յօդուածները: Ուսումնասիրելով մեր երկիրը, նա խօսեւոր առաւ նիւթ ունի: 1875 թ.ին յունվարի 12-ին Քիֆլիս ժողովրդական կարդաց մի դասախօսութիւն ծծմբի մասին, որը յետոյ լոյս տեսաւ առանձին դրոյշով («Сѣра, ея химическія свойства, техническое примѣненіе и геологическое положеніе»)։ Այդ դասախօսութեան մասին «Մշակի» մէջ կարդում ենք. «Պ. Արծրունին չը կարողացաւ իր զգուշացնել չը յայտնել դէպի մեր կապիտալիստների անտարբերութիւնը երկրի ամեն արդիւնաբերութեան վերաբերմամբ և վերջացրել իր խօսքը, իր բոլոր յայտնելով միայն արտաքին ոյժերը՝ Ռուսաստանում և արտասահմանում կազմվելու կապիտալիստների ընկերու-

թիւնների վրա: Միանգամայն անսխալ եզրակացութիւն, որ ցոյց է տալիս, թէ ինչպէս լաւ էր ըմբռնել Արծրունին մեր երկրի կարիքները և մեր ասիական անաշտութիւնը:

Լէօ

ՆԱՄԱԿ ԽՐԱԿԱՐԻՈՒԹԵԱՆ

Մօսկվա, սեպտեմբերի 7-ին

«Մշակ» լրագրի մէջ տպւած էր անտարագիր մի տեղեկութիւն Մօսկվայից՝ Լազարեան ձեռնարանի հանգուցեալ վերատեսուչ Գէորգ Քանանեանի ժառանգութեան մասին, որը լրատուի ասելով հասնում է 47,000 ռուբլու և որը ամբողջովին պէտք է գործարկել բարեգործական նպատակների համար, և թէ հանգուցեալի կտակակատարը, նրա այրին՝ Վառվառէ Գանանեանը դեռ չէ վճռել, թէ ինչպէս պէտք է գործարկել այդ գումարը: Ի մօտոյ ծանօթ լինելով այդ գործին իբրև հանգուցեալի հարազատ եղբայր, ես հարկն եմ համարում մի քանի հարատուութիւն անել յիշեալ լուրի վերաբերմամբ:

Ահա գործի էութիւնը: Այդ լուրը տպագրվելուց մի ամիս առաջ հանգուցեալի այրին հրաւիրեց իր մօտ մի քանի պարոններ, որոնց և յայտնեց այն, ինչ որ վերջոյնեալ լուրի բովանդակութիւնն է կազմում, և ինչորեք, որ նրանք մի արձանագործութիւն կազմեն այն ամեն քանի մասին, ինչ որ նա հաղորդեց նրանց: Հրաւիրվածները չը մերժեցին տիկնոջ առաջարկութիւնը, կազմեցին այդ արձանագործութիւնը, որը ի հարկէ ոչ մի պարտաւորութիւն չէր դրնում տիկնոջ վրա՝ իր ամուսնու գոյքը գործարկել բարեգործական նպատակով: Ձգ գիտեմք ինչ նպատակ է ունեցել տիկնոյ, յայտնելով իր դիտաւորութիւնը այդ հրաւիրած բարեգործ և կամենալով, որ այս բանը հասարակութիւնը իմանայ: Այսքանը միայն կասեմք, որ մեզ մօտ եղած ղօկուսներին նայելով, տիկնոյ տուել է իր ամուսնու գոյքը մասին բաւական անձնիշխ տեղեկութիւն: Ահա հաստատութիւնը: Մօսկվայի նախնական դատարանի որոշման մէջ, որ կայացել է 1897 թ.ի սեպտեմբերի 4-ին, և որը վերաբերում է Գէորգ Քանանեանի կտակի հաստատութեանը, կտակի, որ գրված է եղել 1891 թ. մայիսի 3-ին, ասված է, թէ կտակվող գոյքը, որ բաղկանում է գրամից, տոկոսաբեր թղթերից, չը ստացած ուժերից, կենսաթոշակից, հասնում է 429,658 ռ. 53 կօպ. Պարտք կտակարար ցոյց է տուել՝ մէջ բերված դոկումենտների հիման վրա, 310,003 ռ. 27 կօպ.: Դուրս գալով պարտքի և մի քանի աննշան տպիքը կտակարարի ազգականներին,—այրի տոհմում է յօդուատ իր 109,655 ռ. 26 կօպ. Այս գումարից էլ վերջում է պետական հարկը:

Բ. Քանանեան

սերական Մեծութեան ամենաողորմեաւար հաստատումն Գէորգի ռուսական ազնւականի իրաւունքների մէջ: Բայց կառավարչական Սերատի հրամանագրով, որ կայացած է 1816 թ.ի մարտի 18-ին, Սերատեանին այդ քանի մէջ բացառված է այն պատճառով, որ ռուսական ազնւականի իրաւունքները և արտօնութիւնները ստանալու համար պիտի ներկայացվին թագաւորներից չնորսված հրովարտակներ և դրաւագներ:

Իսկ յայտնի է որ Հայաստանում, որ այնքան յեղափոխութիւնների և աւերումների է ենթարկվել, չէին կարող պահպանվել հայոց թագաւորներից չնորսած գրաւոր վկայագրեր: Մինչև անգամ նոյն իսկ արքաների տապանաբարեք, արձանները և միւս յիշատակները գրեթէ բոլորովին անհետացել են, իսկ օսմանց տէրութեան մէջ ամենին չը կայ սովորութիւն չնորսել ունել և իցէ ազնւականութեան դրաւագներ և հրովարտակներ: Սակայն կարծիք չկայ, թէ Հայաստանում, որ այժմ թիւրքաց տիրապետութեան տակ է գտնվում, կարող են լինել տիրող և ուրիշ՝ հնունդ երեւել եղած ցեղերի պաշտպաններ, որոնց հաշուում հաւանական է կարծել և Արծրունու: Այս աւելի ևս հաստատվում է նրանով, որ նա թողած է հայրենիքում իր սեփական գիւղերը և եկամուտները, Վանի բերդի մի մասով հանդերձ, որ չնորսած է օսմանց տէրութիւնը նրա ցեղին ժառանգաբար, երկրի, որպէս հաւանական է ենթադրել, այն պատճառով, որ նրա նախնիքն են եղել նոյն բերդի չնորսներն ու տէրը:

Միայն Ձեր Կայսերական Մեծութեան այս նոր հպատակ երկրորդ անգամ ներկայացրեց ինձ խնդրագիր, որի մէջ բացատրում է նա, թէ զոհելով հայրենի աշխարհ և իր բոլոր անշարժ կարւածները, միմիայն ցանկալով անձնատուր լինել Ռուսաստանին և յուսալով խաղաղ կենսը վայելել Ձեր Կայսերական

Մեծութեան արդարադատ օրէնքների տակ մնում է այժմ անարգված, հաւաստեցրած լինելով ստորին դասի մարդկանց հետ: Այս պատճառով, իմ կողմից անկարող լինելով չը յարեմ այդ աստիճանի համոզեցուցիչ ճշմարտութիւնը, ես ի նկատի առաջ նմանապէս նրա տէրութեանը ցոյց տված վերմեանը աջակցութիւնը Քիֆլիս քաղաքը լաւագոյն չինութիւններով զարդարելու գործում: Ես ի նկատի առաջ նոյնպէս նրա Հօլանդիայում նշանաւոր գումարով առած պատուականագոյն հայրենի տպարանը, որ այժմ ընծայեց այստեղ կառուցանվող հայոց ուսումնարանին: Նմանօրինակ աչքի առաջ ունենալով նրա առեւտրական յարաբերութիւնները Եւրօպայի բոլոր մայրաքաղաքների հետ, ուր ինքն էլ անձամբ եղած է, ինչպէս նաև և այն զգալի օգուտը երկրին համար, եթէ մեծամեծ գումարների տէր անձնը վստահանալով մեր տէրութեանը՝ սկսեմք Պարսկաստանից և Տաճկաստանից դաղթել զալ Վրաստան,—ահ այս բոլորը աչքի առաջ ունենալով, ես ինձ պարտք համարեցի հասցնելով ամենայն ինչ Ձեր Կայսերական Մեծութեանն ունիւրդութեանը, ամենահպատակօրէր ինչորեք Ձեր ողորմած բարեհաճութիւնը Գէորգ Սերատեան Արծրունու Ռուսաց ազնւականի իրաւունքների մէջ հաստատելու մասին նոյն իսկ այն վկայականներին հիման վրա, որ «Գերդիլիան» ինքն էլ բաւարար էր համարելու, եթէ չնորսված լինէին թագաւորների հրովարտակներով, որպիսի սովորութիւն Տաճկաստանում չը կայ:

Երբօրով այս գեղեցիկ հետևանքն այն եղաւ, որ Ալեքսանդր II կայսրը 1820 թ.ականի սեպտեմբերի 8-ին Վալարաւայից հրամանագրեց կառավարչական Սերատին հաստատել Արծրունու ժառանգական ազնւականութեան աստիճանի մէջ և տալ նրան այդ մասին հրովարտակ (Կը շարունակվի)

* Տե՛ս АГЕН. Кав. Арх. Ком. т. V, док. № 1061.

որոնք յիշված են առաջին յոդուածի մէջ և զեկուդուաներ ներկայացնել, հէնց որ նրանք ոտք կը դնեն իրանց կանոններ վրա. կանոնները հրաւիրում են ուշի ուշով հակել իրանց հողի վրա ապրող անարխիստները գործողութիւնները վրա և անմիջապէս տեղեկութիւն տալ դաշնակցութեան խորհրդին նրանց սահմանն անցնելու մասին:

ԼՕՆԻՍԵՆ, 13 սեպտեմբերի: «Times» լրագրին հետազոտում են Գանակայից. «Տեղական տասնայ Պեկինից» հրաման տուողաւ ձերբակալել կայսրի նախկին գլխաւոր խորհրդատու Վան-Իւնգին: Տասնայը անդրկական հիւսնապատի օգնութիւնը խնդրեց ձերբակալելու: Վանին, որին նա ա-նուանեց պաշտօնից արձակված յանցաւոր: Պարզ է, որ կայսրի հուսակցութիւնը անհրաժեշտ համարեց ընթերցանութիւնը արձակումը: Նրան նա մահվան կը դատապարտուի ձերբակալելուց անմիջապէս յետոյ: Գանակայի չինական պաշտօնեաները հաւատում են կայսրի մահվան լուրին:

ՀՈՒՍԷ, 13 սեպտեմբերի: Բոլոր կարենէտները սկզբունքով ընդունեցին Խաղաղի նա-խաձեռնութիւնը անարխիզմի դէմ կռու մղելու վերաբերմամբ, որի համար և շուտով պաշտօնական առաջարկութիւն կը լինի միջազգային կոնֆերանսի գումարելու:

ՊԱՐԻՑ, 13 սեպտեմբերի: Արդարադատու-թեան միջնորդութեան խորհրդական յանձ-նաժողովը հաւասար մասերի բաժանվեց՝ երեք ձայն դէմ և երեք ձայն յօդուտ պարլամենտա-կան իրաւասութեան: Վաւարութիւնը տես-նելով որ ձայները հաւասար բաժանումն իրան ազատ գործելու իրաւունք է տալիս, բայց և վճռի համար ամբողջ պատասխանատուութիւնը ևս իր վրա է ընկնում, խորհրդի վերաքննութիւնը յետագայէ մինչև երկուշաբթի, որպէս զի քննի-նրան ամբողջ կազմակերպութեամբ: Հետագըր-ներ է ուղարկված Վիժէին և Պէյրաթին, որ նրանք վերադառնան երկուշաբթի օրվայ ժո-ղովին:

ՇԱՆԿԱՅ, 13 սեպտեմբերի: Լուրերին նայե-լով, չինական կայսրի նախկին խորհրդատու Վան-Իւնգ, որը փախել էր Պեկինից, այսօր հասաւ Վուդուն և տարվեց այնտեղ գտնվող բրիտանական նաւը:

ՎԷՑ-ԽԱՅ-ՎԷՑ, 13 սեպտեմբերի: Բրիտանա-կան զինուորական «Տեղեկագրի» նաւը յան-կարծ դուրս եկաւ բաց ծով կնքված հրամաննե-րով: Ենթադրում են, որ նա գնում է դէպի Տակու: Զինուորից նրան կը միանան 6 զինուո-րական նաւ: Դրութիւնը շատ լուրջ է համար-վում:

ԼՕՆԻՍԵՆ, 14 սեպտեմբերի: «Observer» լրա-գիրը հրատարակել է հետեւի մերկայությունները այն մարդու, որի ձեռք Էստերադին Լոնդո-նում ապրեց 10 օր: Յիշեալ անձնատուրութիւնը ասում է՝ Էստերադին հաղորդեց ինձ, որ յայտնի բարեկեցի գրել է ինքը՝ Էստերադին՝ պահանջմամբ գնալու Սանդհերի և գիտու-թեան Անրի: Թէև երկուսն էլ արդէն մեռած են, բայց և այնպէս այդ բանը կարելի է ապա-ցուցանել: Տեղեկատու Բիւրօն Իրէյֆուտի դէմ իր ձեռքի տակ միայն բարոյական ապացոյցներ ունի: Այն նաեւ կը որի մէջ կայ՝ «Այդ թշուա-ռական Դ», իսկ որ գրել է գնալու Շվարց-կոպէն, սակայն այդ խօսքերը վերաբերում են ոչ թէ Իրէյֆուտին, այլ Իոյֆուտին, որը Իրէյ-ֆուտի գործից քանի մի տարի առաջ հաղորդել է գերմանական զինուորական կցորդին՝ Նիցցա-յի չրջակայքի ամբողջութեան յատակագծերը: «Քոլորաձածկ կնիք» տրվելի Իր-Պատրի-զը կ'աւան է: ՊԱՆԻՐԷ, 14 սեպտեմբերի: Վիշնիկը վերա-դարձու Օմիւրման, թողնելով Ֆաշօրում և Սօբադում պահակներ:

ՊԱՐԻՑ, 14 սեպտեմբերի: Հայրենասիրական կոմիտէաների կազմած ժողովը, նախադաճու-թեամբ Իերուզէղի, սկսվել 2 ժամ 20 րոպէին: Նախազգուշութեան մեծ միջոցներ էին ձեռք առնված՝ կարգը պահպանելու համար: Դերու-լէզ մի ձառ խօսեց, որի մէջ խիստ յարձակվեց Բրիտանի վրա, մեղադրելով այն բանի համար, որ նա ցանկանում է Իրէյֆուտի գործի վերա-քննութիւնը, հակառակ իրաւաբանների կարծի-քի: «Այն մարդիկ, որոնք յարձակվում են դրան վրա, — ասաց Դերուլէզը, — մոռանում են, որ չը կայ հայրենիք՝ առանց զօրքի: Մեղաւոր է Իրէյ-ֆուտ թէ ոչ, բայց Ֆրանսիան մեղաւոր չէ, և նրան պէտք է պաշտպանել թշնամիներից: Ժո-ժովը որոշեց՝ վերակազմել «հայրենասէրների միութիւնը»:

ՊԱՐԻՑ, 14 սեպտեմբերի: Դրիմօնի «Libre Parole» լրագիրը հաղորդում է, որ Էստերադին

զիմեց Գանուանին մի նամակով, որի մէջ բա-ղարկում է «Observer»-ի մերկայությունների դէմ:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ԲԱՆԴՆԹԱՐ
Հրատարակիչ՝ ԱՆԴՐԵԱՍ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԴՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԱՆԻ
(Կուկիա, Վորոնցովի արձանի հանդէպ)
Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի
կիրակի օրերից:
Ա. Ռ. Ա. Ռ. ՕՏԵՐԻՐ
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԱՆԻ—11—12 ժ. վերաբու-
ժութեան, վնասակար (սիֆիլիս) և միզապատ. հ.
Կ. Մ. ՉԻՎՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին
և նեարային հ.
Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵԱՆԻ—11—12 ժ. կանանց
հիւանդ.
Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԱՆԻ—1—1½ ժ. ներքին և
երեսային հ.
Ա. Գ. ԳՈՒԿԻ—1½—2½ ժ. ներքին և մի-
ասեռական հ. ակնաբ. կողմից և քիմի. հ.
ԵՐԵՎԱՆԻ ԳԻՐԿ
Վ. Մ. ՄԱՍԿԻՆԱՅԷ—5—6 ժ. ներքին և երե-
կային հ.
Ա. Շ. ՇԱՊԱՎԱՍԿԻ—6—7 ժ. նեարային (ե-
րկարաբուժութիւն), վնասակար և միզապատ. հ.
Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԴԱՆԻ—6½—7 ժ.
Տ. Ի. ՐՈՒԴԵՆԿՈ Տիւնիսիայում քիմիական
և խոշորացուցական հետազոտութիւններ է ա-
նում մէկի, իսկ, արեւան, կաթի և այլն:
Վճար 50 Կ. քաւորները ձրի: Համախորհրդի
(կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերաբնութիւն:
20—150 Բժշկական ՆԱԽԱՍԱՐԴԱՆԻ

Լոյս տեսաւ
ՅՈՎՀԱՆՆԵՍ ՄԱՍԿԻՆԱՅԷ
„ՀՕՐՈՏ-ՄՕՐՈՏ“
(Պատկեր իրական կեանքից)
ԱՌԱՋԻՆ ԳԻՐԿ
Գիտն է 30 Կօպէկ
Դիմել ուղղակի գրավաճառանոցներին:
3—7 (Ե. Տ. Ն.)

ԼՈՒՄԱՑ

ԳԱՐՈՒ ԸՆՏԱՆԻԲԸ

Վէպ Թիֆլիսի կեանքից:
Գիտն է 60 Կ.
Վաճառվում է Թիֆլիսում՝ Կենտրոնական և
Զ. Դրեյրբանցի Կովկասեան գրավաճառանոց-
ներում: Դիմել ուղղակի այդ գրավաճառանոց-
ներին:
2—10

НУЖН. СОЛДН. ПРЕДСТ. (ԴՈՒՐ.)
во ВСЕХЪ провинціалн. городахъ и торг. мѣст.
Россіи. Предл. съ подр. опис. СВОЕГО ПОЛОЖ. И
ИМУЩ. ценза, что мож. служ. благонад. какъ га-
рант. для Т—ва отъ двѣхъ. адр. въ Москвѣ у
Торгово-Промышленн. Товарищ. въ коммерч. обо-
нем. ящ. № 220 обзаянн. и услов. правл. немед-
ленно сообщитъ. 2—3

ԲԺՅԱՊԵՏԵ.Ի. ՖՐԱՆՑԻՈՒՍ
մանադէտ կողմից, քիմի. և ակնաբ. հիւանդու-
թիւնները:
Ընդունում է 5—7 ժամը երեկոյան. Վերանմի-
նովկայա փողոց, տուն № 4, Դումայի հանդէպ:
(Ե. Տ. Ն.) 8—30

Մ. ՄՈՒՐՏԱԿ

չարանակում է տալ ԱՆԳԼԻՍԱՆ ԼԵՋՈՒԻ
ԴԱՍԵՐ, իր տանը: Խմբովին աւելի է ծանր Ե-
րաշխատում է արտասանութեան համար, որն
ընդունված է անդլիական համալսարաններում:
Կարելի է տեսնել ցերեկվայ ժամը 4-ին: Հաս-
ցէ՛ն՝ Մաղաթեան փողոց: 4—5

ԿԱՏ. Խ. ԼԻՍԻՑԵՆ

կամենում է պարագել մի քանի՝ 6½—7
տարեկան տղաների հետ իր որդու հետ
մի ատեն զ: Սօրլակ, Սաղավայա փ., սե-
փական տուն, № 29:
(12, 15) 2—2

ՍԵՆԵԱԿՆԵՐ

է տրվում վարձով՝ բոլորովին վերանորոգ-
ված, կահ-կարասիքով և տնային ճաշով: Հաս-
ցէ՛ն՝ Երկաթուղիական փողոց, № 5, տուն
Միլովի:
10—10 Ֆրանսուհի՝ ՏԻԿԻՆ ԿՕՐԻԿԷ

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
ընդունվում են ԳԻՇԵՐՈՒԿ աշակերտներ և
աշակերտուհիներ բնակողներիցով կամ առանց
բնակողներից: Սօրլակ, Սաղավայա փողոց,
№ 50, հարցնել Խաթիսեանին:
3—3

Մ. Ս. ՄԱՆԴԻՆԵԼՆՅԻ ԳՊՐՈՑՈՒՄ
Ընդունվում են տղաներ արժեւանական միջնակարգ ուսումնարաններ մտնելու
համար: Ընդունվում են և գիշերօթիկներ: Ուսումնարանը գտնվում է ՍՕԼՕԿԻՆՈՒՄ
Սաղավայա փողոց, գնդապետ Սահակեանցի տանը, № 54. (Ե. Տ. Ն.) 6—8

ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ա. Գ. ԲԱՐԱՆԱՍԵԱՆԻ
Ընդունվում են երեխաներ գիշերօթիկ, կես-գիշերօթիկ և երթեւեկ: Ուսումնա-
րանի և պանսիօնի նպատակն է պատրաստել երեխաներին միջնակարգ դպրոցներ
մտնելու համար: Հասցէ՛ն՝ Բագու, Հին-փոստի փողոց, տուն Հաջի-Նեյմաթի:
(Ե. Տ. Ն.) 5—10

ԱՌԵՏՐԵԱՆ ԿՈՒՐՍԵՐ
(Թիֆլիս, Նաղաւայա փողոց, № 9)
Ցանկացողները ունենալ իրանց առևտրական գործերի համար ուսման ընթացքը աւարտած
աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն զիմել կուրսերի հիմնություն, Ս. Մանուէլեան:
ցիւն: Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն, Կովկասի ուսումնա-
րանական չրջանի հոգաբարձուի հաստատված ծրագրի համեմատ, և ունեն օրինաւոր ատտեստատներ-
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՍԿՈՒԼՈՒ ԵՆ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1-ԻՑ:
Կուրսերի ծրագիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղը: Ծովանոյների բան-
կային գրասենեակում և կուրսերի հիմնովի բնակարանում: Օտարաբաղադրացիները դիմում են՝
ТИФЛИСЪ, упрединтелю коммерческихъ курсовъ С. П. Мануэляну. (Ե) 12—12

ՄԱՆԿԱԿԱՆ ԳԱՐՏԷՋ
ՌԻՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ
Տեղափոխվեց Կրկեկի տուն, Պոլեյսկայա փողոց, ԲԱՐՈՒՄ
Ընդունվում են և պատրաստում երեխաներին բոլոր միջնակարգ դպրոցների համար: Հաս-
ցէ՛ն՝ Կիւրօչնայա փողոցի անկիւն (տուն № 35) և Անդրէեւկայա փողոց
(տուն № 12): (Ե. Տ. Ն.) 5—5

ԳՊՐՈՑ Մ. Վ. ԱԿԻՆՓԻԵՎԱՅԻ
Ընդունելութիւնը երկուսն երեխաներ օգտատուի 26-ից, ուսումը կրկնովի սեպտեմբերի 1-ից:
Դասերը կրկնում են և պատրաստում երեխաներին բոլոր միջնակարգ դպրոցների համար: Հաս-
ցէ՛ն՝ Կիւրօչնայա փողոցի անկիւն (տուն № 35) և Անդրէեւկայա փողոց
(տուն № 12): (Ե. Տ. Ն.) 5—5

Գաղափար զնով՝ կանաչազոյն,
խօսող քուրակներ են
Ծախվում: Նոյն տեղում ցանկա-
նում են գնել Կովկասեան վայրի
կենդանիներ, այն է՝ եղջերուներ,
վայրի այծեր, քարայծեր, կըլ-
տաներ և վայրի ոչխարներ:
Հասցէ՛ն՝ Միջալէւան փողոց,
№ 106, տուն Բարամօվի, բակում:
4—12 ՀՈՒԳՈ ՎԻՆԿԷՐ



ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱՐԱՆԱՄԵԱՆ
Հեղինակ «Ձեռնարկի առևտրական և դրամարանական հաշուապահութեան»
ՌԻՍՈՒՑԱՆՈՒՄ ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ է
Երկու տեղի անձանց, 4 ամսվայ ընթացքում հաշուապահութիւն գործնականապէս, և-
րաշխատելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել:
ՊԱՐԱՊՈՒՆԹԻ ԱՌԱԿԱՆԵՐՆ ԵՆ
Ա) Կրկնակի խաղական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ձեւերի, հան-
դերձ նախալին արդիւնաբերական և կերտինի գործարանական հաշուետեսութեան:
Բ) Առևտրական խաղականութիւն:
Գ) Առևտրական նամակադրութիւն:
Դ) Գնադրութիւն և ամենալատ ձեռքերի ուղղութիւն:
Պարապահութիւնը սկսվելու են սեպտեմբերի 15-ից, ճաշից յետոյ և պարբերաբար շաբա-
տակներու են իւրաքանչիւր ԶՈՐՍ ամսից յետոյ, իսկ կիրակի օրերը լինելու են առանձին
գործնական պարապմունքներ:
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 5 ժամ երեկոյան,
ՍՕԼՕԿԻՆ, Ս. ՊԵՏՐՈՍԵԱՆԻ փողոց, տուն Լիսեյանի, № 20:
Վերջիշխալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է ԹԻՖԼԻՍՈՒՄ, Խիզդէկիլի գրա-
վաճառանոցում և հեղինակի ձեռք, և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում:
Գիտն է 3 ր. 50 Կօպէկ: Օտարաբաղադրացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հե-
ղինակին, առանց պօստի ծախս վճարելու:
(Ե. Տ. Ն.) 27—30

ՏԱՆՏԵՐԵՐԻ ՌԵՍԿՐՈՒԹԵԱՆ
Ունենալով ՍԱՆԿԻ և ՄՇԱԿՆԵՐԻ ԱՐՏԷԼ, Թիֆլիսի պ.պ. տանտերին և հաստատութիւն-
ներին ծառայութիւնս եմ առաջարկում՝ սրբել ու տանել ժողոված աղբն ու ցեխը թէ փո-
ղոցներից և թէ աղբարկղներից: Հասցէ՛ն՝ Ալեքսանդրօվկայա փողոց, № 29.
Մ. ար. Կոստանեանց 8—10

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-ie
ՖԱՆԵՍԻԱՆՆ ԴԱՆԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱՌՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յուլիսի 25/6-ի չորեքշաբթից:
Եւ հակառակը՝ Բաթումից Մարսել, մտնելով Տրապիզոն, Սամսուն և Պոլսի: Մեկնում է Բաթու-
մից՝ չորեքշաբթի, 16/28 սեպտեմբերի ՍԻՐԿԱՍՍԻ չորեքշաբթի, նաւագետ ԳԱՐԻԳԻ: Եւ այսպէս շա-
բաթականաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:
Բաթումից Պարսկ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ տրվում են սովորականից
պակաս գինով:
Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու համար
թող բարեհաճեն զիմել ընկերութեան գործակառարներին՝
ԲԱՌՈՒՄՈՒՄ—պ. Վիկտոր դ'Արմիտի, Նաբէլ-Մայա: ԹԻՖԼԻՍՈՒՄ—պ. Օ. Գ. Բարեկեղայ-
նեանին, Սիւնի փող. Նախկին Սարժուտ. քարվանսարա: ԲԱՐՈՒՄ—պ. Ս. Գիլլարեանին, Կոլլաբեա-
կինայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍՍԻՅԱՎ—պ. Մելիսօր Հերշնորդերին: (Ե. Տ. Ն.) 16—20